ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՔԵՄԵՆՅԱՆ ԻՐԱՆԸ

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

Աքեմենյան Իրանը եզրափակում է հին արևելյան երկրների մշակութային զարգացման մի կարևոր փուլը, իր մեջ ամփոփելով այդ բնագավառում ձեռք բերված նվաճումներից շատերը։ Այս հանգամանքը առաջացրեց հին պարսկական արվեստի ծագման և բաղադրիչ մասերի հարցը։ Որոշ հետազոտողներ գտնում են, որ Աքեմենյանների ժամանակաշրջանի իրանական արվեստը նախորդ մշակույթների տարրերից արհեստական միասնություն կազմող մի երևույթ է, ուրիշների կարծիքով՝ ազդեցություններից բավականին զերծ մնացած, զտարյուն մի մարմին։ Իրավացի են նրանք, որոնք առանց ժխտելու հին իրանական արվեստի և նյութական մշակույթի ինքնուրույնությունն ու ստեղծագործական կարողությունները, վեր են հանում դրանց ձևավորմանը մասնակից դարձած մի շարք մշակույթների ներդրումները։ Այս կապակցությամբ հիշատակվում է ասսուրա-բաբելացիների, եգիպտացիների, հույների վաստակը։ Գնալով ավելի մեծ դեր է վերագրվում Իրանական սարահարթի նախաիրանական քաղաքակրթություններին։ Վերջին տասնամյակներում հաճախակի նշվում է նաև Ուրարտուն՝ որպես հնարավոր մասնակիցներից մեկը աքեմենյան ժամանակաշրջանի իրանական մշակույթի կազմավորման գործում։

Ուրարտական կենտրոնների պեղումները Սովետական Հայաստանում, հնագիտական նորանոր նյութերի հայտնաբերումը, հրատարակումը և ուսումնասիրությունը հնարավոր են դարձնում էլ ավելի հաստատուն հիմքերի վրա դնել քննարկվող պրոբլեմը։ Իհարկե, վերջնականապես հաստատված ու ստուգված են ուրարտա-իրանական ոչ բոլոր նմանություններն ու զուգահեռները։ Բացի դրանից մնում են մի շարք ընդհանրություններ ևս, որոնց կողքով անցնել հնարավոր չէ և որոնք իրենց բացատրությունն են պահանջում։

Այս հարցերի հետ կապված հիմնական դժվարությունները պայմանավորված են Ուրարտուի և նրա ժամանակակից ու հարևան պետության՝ Ասորեստանի արվեստի ու նյութական կուլտուրայի մի քանի երևույթների նմանությամբ, որի հետևանքով ընդունված է իրանական մշակույթի որոշ նախատիպերը որոնելիս նախապատվությունը տալ Ասորեստանին։ Սա ավանդական մոտեցումն է։ Ուրարտական մշակույթի տեսակարար կշիռը, սակայն, անընդհատ աճում է և նրա ճարտարապետության, շինարարական տեխնիկայի, կիրառական արվեստի, հատկապես մետաղագործության ու խեցագործության առաջատար նշանակությունը դժվար է այլևս անտեսել։ Ուրարտական ժառանգության դրսևորումները աքեմենյան մշակույթի մեջ նպատակահարմար է խմբավորել ըստ թեմաների։

Այդ դրսևորումները հատկապես ակնառու են ճարտարապետության և շինարարական տեխնիկայի բնագավառում: *Կարմիր-բլուրի միջնաբերդի պե-*

ղումները ցույց են տալիս, որ ուրարտական ճարտարապետության հատակագծային կոմպոզիցիայի համար մասամբ բնորոշ են նեղ և երկար սենյակները[1]։ Սակայն վերջին տարիներին, հատկապես Արին-բերդում, ինչպես և Կարմիր-բլուրի քաղաքային թաղամասում կատարված աշխատանքներից երևում է, որ ուրարտական ճարտարապետությանը խորթ չէին նաև սյունազարդ սենյակները։ Այդ մասին կարելի էր կռահել դատելով մի շարք այնպիսի տվյալներից, ինչպիսիք են՝ սյան տարբեր մասերի մնացորդները (Արմավիր, Արին-բերդ, Տաշրուրուն)[2], սյունաշարքի գոյությունը տաճարական շենքերի շուրջը (գուցե Մուսասիր և Ալթրն-թեփե)[3], սյունազարդ նախասրահը (Արին-բերդ, Խալդի տաճար)[4], սյունազարդ ներքին բակը (14 սյունանոց, Արին-բերդ)[5] և հատկապես Թեյշեբաինիի բնակելի տների սենյակների ծածկերը կամ բակերի կիսածածկերը կրող սյունների քարե խարիսխները[6]։ Այժմ, սակայն, մենք ունենք արդեն ուրարտական սյունազարդ սենյակների ավարտված ձևեր։

Արին-բերդի պալատական կոմպլեքսում բացվել է մի դահլիճ, որի ընդերկայնական առանցքի վրա դրված երեք խարիսխների վրա բարձրացող փայտե սյուները կրում էին սենյակի ծածկը։ Այս տեսակետից սյունավոր այս սենյակը նման է Արին-բերդի Խալդի տաճարի երկարավուն սենյակին, որի ընդերկայնական առանցքի վրա, պեղողի կարծիքով, ծածկը կրող սյուներ պիտի եղած լինեին[7]։

Կարմիր-բլուրի քաղաքային թաղամասում 1961 թ. բացված մեծ շենքում կան սենյակներ չորսական սյուներով[8], որոնց նմանները շատ են հանդիպում Աքեմենյանների մայրաքաղաք Պերսեպոլիսում, հատկապես նրա կանանոցում։

Վերջապես, ուրարտական պետության հյուսիս-արևմտյան հատվածում տեղադրված Արգիշտի II-ի ամրոցում բացվել է սյունազարդ մի մեծ դահլիճ (45մ×29մ) վեցական սյուների երեք շարքով[9]։

Ինչպես հայտնի է, տարբեր տեսակի սյունազարդ դահլիճներին և սենյակներին նշանակալից դեր էր հատկացված աքեմենյան ճարտարապետության մեջ։ Նրանց ծագումը որոնելիս հաճախ դիմում են եգիպտական հուշարձաններին։ Հնագիտական պեղումները ցույց են տալիս, սակայն, որ անհրաժեշտ է վերանայել այս տեսակետը և հաշվի նստել ուրարտական նյութերի հետ[10], մանավանդ որ սյունազարդ դահլիճի բավականին զարգացած մի ձև (5×5

---

[1] Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, նկ. 5։ К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини (Кармир-блур, IV), Ереван, 1955, էջ 64։

[2] Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 201 և К. Л. Оганесян, նշվ. աշխ., էջ 6։

[3] M. Mellink, Archaeology in Asia Minor, American Journal of Archaeology, 66, 1962, էջ 181։

[4] К. Л. Оганесян, Архитектура Эребуни (Арин-берд, I), Ереван, 1961, նկ. 25а, 25б, 27։

[5] Նույն տեղում, նկ. 3, 4, 10։

[6] К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини (Кармир-блур, IV), էջ 23, 27, 28, 29, նկ. 11, 12։

[7] К. Л. Оганесян, Архитектура Эребуни (Арин-берд, I), Ереван, 1961, էջ 53 և նկ. 3, 4, 19։

[8] А. А. Мартиросян, Новые данные по истории города Тейшебаини, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 222։

[9] M. Mellink, նշվ. աշխ., էջ 181—182։

[10] К. Л. Оганесян, նշվ. աշխ., էջ 84 և հտ.։

այուններով) հայտնի է ուրարտական մշակույթի հետ աղերսվող խեթական աշխարհում՝ Բողազքյոյում[11]։

Ուրարտական ճարտարապետության ինքնատիպ ասպեկտն են բացահայտում ժայռափոր շինությունները, որոնք հանդիպում են պետության տարբեր վայրերում։ Նկարագրելով Շամիրամ թագուհու շինարարական գործունեությունը Վանում, Մովսես Խորենացին գրում է. «Իսկ զընդդէմ արեգական կողմն անձաւին, ուր և ոչ գիծ մի երկաթով այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս դանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց» (Ա, ԺԶ)։

Ուրարտական վիմափոր ճարտարապետությունը ներկայացված է բազմաթիվ խորշերով՝ այսպես կոչված դոներով և առանձնապես ամբողջական կոմպլեքսների մեջ խմբավորված սենյակաձև արհեստական քարայրներով[12]։ Նման հուշարձաններով հատկապես հարուստ է Վանի ժայռը։ Կարծրաքար ժայռերի մեջ մեծ վարպետությամբ փորված այս շինություններից ուսումնասիրողներն ուղղակի կամուրջ են զգում դեպի իրանական վիմափոր հանրահայտ դամբարանները[13], որոնք աչքի են ընկնում նաև իրենց ձևավորված ճակատներով ու մուտքերով, մարականները (Կրդ-կսպան, Ֆահրիկա, Դուքանի-դաուդ) ավելի պարզ և նախնական, աքեմենյանները (Նակշ-ի-ռուստեմ)՝ զարգացած տեսքով։ Այս կապակցությամբ պետք է նշել, որ ուրարտական վիմափոր հուշարձանները ևս մշակված մուտքեր և ճակատներ ունեն, երբեմն՝ պարզ հարթեցված, հաճախ՝ դռան կամ կամարակապ խորշի ձևի, ժայռի մեջ փորված աստիճաններով ու ելուստավոր քիվով[14]։

Ուրարտական արհեստական քարայրների զգալի մասը, ինչպես և իրանական ազգակից հուշարձանները, վիմափոր դամբարաններ են համարվում[15]։ Նմանօրինակ ընդհանրություններ ևս կարող է նպաստել իրանական խմբի ծագումնաբանական հարցերի պարզաբանմանը։

Իրանի հարավում՝ Խուզիստանում, հայտնաբերվել է մի հուշարձան, որին մեծ նշանակություն է վերագրվում ուրարտա-իրանական ճարտարապետական առնչությունների տեսակետից։ Այս հուշարձանը, որը հայտնի է Մասջիդ-ի-սուլեյման անունով, մի հարթակ է՝ պարսպապատերի և տարբեր շինությունների հետքերով։ Իր մի մասով այն հենված է բլրի լանջին, մյուս մասը կազմված է շարված քարերից։ Այս կառույցը, որը Իրանում եղած նույնօրինակ կառույցներից վաղագույնն է, պրոֆ. Գիրշմանի կարծիքով որոշակի ընդհանրություններ ունի ուրարտական ճարտարապետության հետ[16]։ Եվ իսկապես, վերջինս հոչակված է զանազան բնույթի և նշանակության հարթակաձև (տերրասաձև) քարե շինություններով, որոնք վկայում են ուրարտացիների կառուցողական արտակարգ ունակությունների մասին։

---

[11] R. Naumann, Architektur Kleinasiens, Tübingen, 1955.

[12] Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 207—219։

[13] Նույնի История и культура Урарту, Ереван, 1944, էջ 270։

[14] Նույնի Ванское царство, 1959, էջ 208, 209, 213։

[15] Նույն տեղում, էջ 216—218։

[16] R. Ghirshman, Masjid-i-Soleiman, residence des premieres achéménides, Syria, հատ. XXVII, 6, 3—4, էջ 204 և հտ. և Նույնի, La civilisation achéménide et l'Urartu, էջ 85—88։

Այդպիսի արհեստական հարթակներ ստեղծվում էին բլուրների լանջերին՝ ուրարտական ամրոցների օգտակար տարածությունը մեծացնելու նպատակով։ Ակադ. Օրբելին թողել է Հայկարերդի ուրարտական ամրոցի արհեստական հարթակների նկարագրությունը, որից երևում է, թե քարային և հողային ինչ մեծ աշխատանքներ էին անհրաժեշտ դրանք կառուցելու համար[17]։

Արհեստական հարթակներ էին պատրաստվում նաև մշակելի անհրաժեշտ տարածությունների համար։ Արձանագրություններից հայտնի է, օրինակ, որ Մենուայի աղջկա՝ Թարիրիայի համար Վանից ոչ հեռու տնկված էր խաղողի այգի հատուկ բարձրացված արհեստական հարթակի վրա (70×18մ)[18]։

Վերջապես, զգալի տարածություններ էին հարթեցվում ժայռերի վրա կամ տարբեր նպատակների համար հարթակներ էին կառուցվում ամրոցների պարսպապատերի երկարությամբ[19]։

Իր այլ հատկանիշներով ևս Մասջիդ-ի-սուլեյմանի հուշարձանը հետաքրքրություն է ներկայացնում։ Հարթակը, պարսպապատով և կոնտրֆորսներով հանդերձ, կառուցված է հսկա չափեր ունեցող և ավելի փոքր քարերից, որոնց երեսի մասերը հարթեցված են։ Քարերն իրար վրա շարված են առանց կապակցող նյութի՝ շաղախի գործածության[20] (նկ. 1)։

Նկ. 1

Հնագույն շրջանում քարի մշակումը Իրանական սարահարթում գտնվում էր ցածր աստիճանի վրա, և այդ է պատճառը, որ հետազոտողները իրանական քարե վաղ շինություններին ծանոթանալիս կամ քարի մշակման տեխնիկայի ակունքները որոնելիս իրենց հայացքներն ուղղում են դեպի Հայկական լեռնաշխարհը[21]։ Եվ իսկապես, Հայկական լեռնաշխարհի կիկլոպյան և ուրարտական բազմաթիվ ամրոցներն ու բերդերը ունեն նման տեխնիկայով կառուցված պարսպապատեր։ Այս կապակցությամբ կարևոր է նշել նաև, որ քարի մշակման ավելի զարգացած ձևը՝ «ռուստովկան» (երբ վեմի եզրերը ժապավենաձև հարթեցված են) հանդիպում է ինչպես Ուրարտուում (Թոփրախ-կալեի տաճար), նույնպես և Իրանում (Պասարգադայի հարթակ)[22]։

Պրոֆ. Գիրշմանի կարծիքով, իրանական ցեղերը, որոնք ժամանակին ապրում էին Իրանի հյուսիս-արևմուտքում, Ուրմիա լճի շրջակայքում, ուրարտական հուշարձանների հարևանության պայմաններում կարող էին յուրաց-

[17] „Археологическая экспедиция 1916 г. в Ван". Доклады Н. Марра и И. Орбели, Петроград, 1922, էջ 10։

[18] Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 143—144։

[19] К. Л. Оганесян, նշվ. աշխ., էջ 17, 22։

[20] R. Ghirshman, նշվ. աշխ., էջ 206։

[21] Նույն տեղում, էջ 210, 211, 215։

[22] R. D. Barnett, Persepolis I, Iraq, XIX, 1, 1957, էջ 74։

ված և ընդօրինակած լինել ուրարտացիների շինարարական սկզբունքները իրենց վաղագույն նստավայրերը կառուցելիս[23]։ Ուրարտական և իրանական ճարտարապետության զուգահեռ ուսումնասիրումը, հատկապես հնագիտական նորագույն արդյունքների լույսի տակ (Կարմիր-բլուր, Ալթրն-Թեփե), էլ ավելի է ընդարձակում նմանօրինակ որոշակի աղերսների բացահայտման հնարավորությունները։

Այժմ, ի տարբերություն վերևում հիշատակված օրինակների, կարելի է մատնանշել իրանական կոնկրետ հուշարձաններ, որոնց բազմաթիվ առանձնահատկությունները հնարավոր է բխեցնել որոշակիորեն թվագրվող ուրարտական նյութերից։ Պարսկական հին մայրաքաղաքում՝ Պասարգադայում և Աքեմենյան թագավորների վիմափոր դամբարանավայրում՝ Նակշ-ի-ռուստեմում պահպանվել է աշտարակաձև երկու շինություն. Զինդան-ի-սուլեյմանը՝ ավերված վիճակում և Կաաբա-ի-զարդուշդը՝ կանգուն[24]։ Ըստ հատակագծերի այս աշտարակները քառակուսիներ են՝ ելուստավոր անկյուններով[25] (նկ. 2, 4)։ Արտաքինից նրանք եռահարկ շենքի տպավորություն են թողնում, քանի որ, բացառությամբ մուտքի կողմի, պատերը զարդարված են երեք շարք կազմող երկուական պատուհաններով (նկ. 3, 4)։ Քարե աստիճանով կարելի էր բարձրանալ և մտնել աշտարակի վերևի մասում տեղադրված միակ փոքր սենյակը։ Աշտարակաձև այս շենքերի ստույգ բնույթի ու նշանակության մասին գիտնականները դեռևս համաձայնության չեն եկել։ Նրանց մի մասը կարծում է, որ այդ շենքերը կառուցվել են որպես դամբարաններ, ըստ ուրիշների (և այս կարծիքը գնալով ավելի լայն տարածում է գտնում) դրանք եղել են կրակի տաճարներ[26]։

Աքեմենյան ճարտարապետության մեջ եզակի այս շինությունները ուրարտական հուշարձանների հետ կապակցելու փորձը վաղուց է արված[27]։ Այժմ, երբ նոր նյութեր են ի հայտ եկել, հնարավորություն է ստեղծվել այս հարցը քննել իր ամբողջության մեջ, հաշվի առնելով ինչպես արտաքին տեսքն ու հարդարման եղանակները, այնպես էլ ծածկի ու հատակագծի առանձնահատկությունները։ Եթե սկսենք վերջինից, ապա կտեսնենք, որ ուրարտական մի քանի հուշարձանների և իրանական աշտարակաձև շինությունների հատակագծերի միջև մեծ նմանություն կա, որը կուտակվող նոր նյութերի առկայության պայմաններում այլևս պատահական համարել չի կարելի։ Դեռևս Բարնետն է ուշադրություն հրավիրել Կարմիր-բլուրի բազալտե աշտարակների վրա, որպես իրանական հուշարձանների հնարավոր նախատիպերի[28]։ Այդ աշտարակները, որոնք օժտված են ելուստավոր անկյուններով, ունեցել են կառուցողական նշանակություն և որպես մույթեր կրել են երկրորդ հարկը[29] (նկ. 2, 3)։

---

[23] R. Ghirshman, նշվ. աշխ., էջ 215։ Նույնի, La civilisation achéménide et l'Urartu, էջ 85—86։

[24] E. Schmidt, Persepolis, I, Chicago, 1953, նկ. 41 B.

[25] F. Sarre, E. Herzfeld, Iranische Felsreliefs, Berlin, 1900, նկ. 1։

[26] H. H. von der Osten, Die Welt der Perser, Stuttgart, 1956, էջ 86։

[27] E. Herzfeld, Archaeological history of Iran, London, 1935, էջ 33։

[28] R. D. Barnett, նշվ. աշխ., էջ 74։

[29] К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини (Карм:р-блур, IV), նկ. 38, 39, էջ 98 (հատակագիծը հրատարակված չէ)։



Նկ. 2

Երգնկայից ոչ հեռու, դեպի Էրգրում տանող ճանապարհի վրա, Ալթընթեփե կոչվող բարձունքի պեղումները հայտնաբերեցին ուրարտական մի կենտրոն, Արգիշտի II-ի (713—680) ամրոցը՝ պարսպապատով, դամբարաններով և կոթողներով, դաղաթին՝ շենքերի, այդ թվում տաճարի հետքերով։ Սրա պատերի ներքևի շարքերը քարից են, վերևի մասը՝ չթրծված աղյուսից։ Մուտքը հարավից մի նրբանցքով հաղորդակցվում է պաշտամունքային քառակուսի մի սենյակի հետ, որի հյուսիսային պատի տակ տեղադրված է զոհասեղանը՝ մի շարք նվիրատվություններով, այդ թվում՝ բրոնզե և երկաթե նիզակի ծայրեր[30]։ Շատ հետաքրքրական է այն հանգամանքը, որ շենքը չորս կողմից շրջապատված է սյունաշարքով։ Սակայն առայժմ դժվար է որոշակիորեն պնդել այդ սյունաշարքի և տաճարի բուն շենքի միջև կոնստրուկտիվ կապերի գոյության մասին, քանի որ թվում է, թե սյունաշարքը կողմնորոշված է դեպի իրեն զու-

[30] Tahsin Ozguc, Excavations at Altintepe, Türk Tarih Kurumu Belleten, c. XXV, № 98, 1961, էջ 278—279։

դահլիճ ձգվող և ամբողջ այս կոմպլեքսը արտաքինից եզրափակող պատերը[31]։

Հատկապես կարևոր է Ալթըն-թեփեի տաճարի բուն շենքի հատակագիծը (առանց սյունաշարքի). այն դրսևորում է մեզ հայտնի այնպիսի առանձնահատկություններ, որոնք մի կողմից աղերսվում են Կարմիր-բլուրի ուրարտական աշտարակների, իսկ մյուս կողմից՝ քննության առնվող իրանական հուշարձանների հետ։ Ըստ հատակագծի՝ տաճարը առանց սյունաշարքի կազմում է մի քառակուսի (13,90×13,90մ), պատի արտաքին երեսից դուրս ցցվող ելուստավոր անկյուններով, որոնք նրան հաղորդում են աշտարակաձև բնույթ[32] (նկ. 2, 2)։

Ալթըն-թեփեի այս հուշարձանին ծանոթանալուց հետո, հնարավոր է դառնում առանձնացնել ուրարտական նույնատիպ տաճարների մի խումբ, քանի որ անցյալ դարում պեղված Թոփրախ-կալեի տաճարը[33] և Արճեշից հյուսիս՝ Պատնոցի մոտ Աղնավուր-թեփեի վրա գտնվող տաճարի[34] մնացորդները նույն հատակագիծն ունեն։

Ուրարտական նմանօրինակ հատակագծով շինությունների մասին մեր պատկերացումները կարելի է ընդլայնել նաև այլ բնագավառից բերված օրինակներով։ Հայաստանի պատմական թանգարանում պահվում է Կարմիր-բլուրից գտնված ուրարտական աշտարակի ոսկրե մի փոքրիկ մոդել, որը նույնպես պատկերված է բնորոշ ելուստավոր անկյուններով[35] (նկ. 3, 3)։ Ըստ երևույթին սրանք նշված են նաև Բրիտանական թանգարանում պահվող ուրարտական բրոնզե աշտարակի մոդելի վրա[36] (նկ. 3, 1)։

Ինչպես տեսնում ենք, համեմատական նյութի առատությունը ցույց է տալիս, որ ուրարտական ճարտարապետության մեջ ձևավորվել էր աշտարակաձև շենքի կայուն մի տիպ՝ բնորոշ հատակագծով։ Սրա նախնական, չավարտված ձևը պետք է համարել ուրարտական քաղաքների և ամրոցների պարսպապատերի սիստեմի մեջ մտնող աշտարակները, որոնք ունեն պաշտպանողական բնույթ, թեև արտաքին հարթությունները զուրկ չեն որոշ դեկորատիվություններից[37]։ Աշտարակաձև շինությունը պարսպապատից առանձնացած, բայց ամրության խորհրդանշան կրող ինքնուրույն մի միավոր է։ Ինքնուրույնացման այս պրոցեսին օժանդակում է այն հանգամանքը, որ ի բնե աշտարակը յուրահատուկ տեղ է գրավում պարսպի ճարտարապետության մեջ։ Եթե աշտարակը համատարած շարվածք չէ, ապա այն օժտված է ծածկով, ունի պատուհաններ, իսկ ներսում սենյակներ, մի խոսքով՝ գտնվում է թեկուզ և ամրացված, բայց ինքնուրույն շենքի վերածվելու ճանապարհին։ Այդ պատճառով հնարավոր է, որ բրոնզից և ոսկրից պատրաստված ուրարտական աշտարակների մոդելները պատկերում են ինքնուրույն ամրացված շինություններ, որոնք չեն մտնում պարսպային սիստեմի մեջ։ Այդ դեպքում սրանք բնակելի շենքեր են, ինչպի-

[31] Նույն տեղում և M. Mellink, նշվ. աշխ., էջ 181։

[32] Tahsin Ozguc, նշվ. աշխ., նկ. 4։

[33] Afif Erzen, Untersuchungen in der Urartäischen Stadt Toprakkale bei Van in den Jahren 1959—1962, Archaologischer Anzeiger, 1962, H. 2, նկ. 12։

[34] Yusuf Boysal, Ouvrages ourartéennes mis au jour par des chercheurs de tresors a Aznavur, Türk Tarih Kurumu Belleten, հ. XXV, № 98։

[35] Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, նկ. 56։

[36] Նույն տեղում, նկ. 56։

[37] Նույն տեղում, նկ. 5, ինչպես նաև նույնի История и культура Урарту, Ереван, 1944, էջ 158։



Նկ. 3

սիք կարելի էր հանդիպել Քսենոֆոնի օրոք հարավային Հայաստանի գյուղերում կամ Պոնտոսի լեռներում՝ մոսինիկների բնակավայրերում («Անաբազիս», գիրք IV, 4, 2, գիրք V, 5, 25)։

Զարգացման մի ուրիշ գիծ, որը շեշտը դնում է անկյունային ելուստների կոնստրուկտիվ նշանակության վրա, տանում է դեպի Կարմիր-բլուրի բազալտե աշտարակները, եթե դրանք համարենք իրապես երկրորդ հարկը կրող մույթեր։ Վերջապես, եթե հաստատվի, որ Ալթրն-թեփեի տաճարը շրջապատող սյունաշարքը անմիջականորեն չի վերաբերում նրան, ապա հանձին այդ և նման տաճարների՝ կունենանք աշտարակաձև շինությունների պաշտամունքային տարբերակը։

Բոլոր դեպքերում նման տիպի շինությունների մեծ տարածումը ուրարտական ճարտարապետության մեջ՝ մի կողմից և նրանց հատակագծային առանձնությունները իրանական հուշարձանների հետ՝ մյուս կողմից, ընդգծում են դրանց նշանակությունը վերջինների ուսումնասիրման գործում։ Հետաքրքիր է նշել, որ նման հուշարձանների նշանակությունը չի սպառվում միայն Ուրարտուով և Իրանով։ Հայկական ՍՍՌ ԳԱ հնագիտության և արվեստի ինստիտուտների արշավախումբը (ղեկ. պրոֆ. Բ. Ն. Առաքելյան) 1961 թ. ամռանը հին Հայաստանի մայրաքաղաք Երվանդաշատի տերիտորիայում հանդիպեց մի շենքի, որի հատակագիծը հիշեցնում է վերոհիշյալները և, հետևաբար, դրսևորում մշակութային հետաքրքիր կապեր մի կողմից՝ Հայաստանի և Ուրարտուի, մյուս կողմից՝ Հայաստանի և Իրանի միջև։



24. 3. 1

Swpamuly 1

Sufumuly 11

Ինչպես մատնանշվեց վերևում, միայն հատակագծային առանձնահատկություններով չէ, որ Պասարգադայի և Նակշ-ի-ռուստեմի աշտարակները կապվում են ուրարտական ճարտարապետության հետ։ Մերձեցման եզրեր կարելի է տեսնել նաև այլ հատկանիշների մեջ։ Այսպես, օրինակ, իրանական այս հուշարձանների եռահարկ տեսքը իր հաստատումն է գտնում նախ և առաջ ուրարտական նյութի մեջ։ Անցյալ դարի երկրորդ կեսում Վանի շրջակայքում գտնվող ուրարտական կենտրոնի՝ Թոփրախ-կալեի պեղումները ի հայտ բերեցին երկու բրոնզե թերթիկներ ուշագրավ շենքերի փորագրված նկարներով[38]։ Այս մոգելները, որոնք հետաքրքիր մանրամասնություններ են հաղորդում ուրարտական ճարտարապետության ձևերի մասին, պատկերում են եռահարկ տուն և այսպիսով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում իրենց ձևի մեջ եզակի իրանական աշտարակների ուսումնասիրման համար[39] (նկ. 3, 2)։

Ուրարտական բազմահարկ շենքերի մասին ոչ պակաս կարևոր վկայություն է հաղորդում Մ. Խորենացին։ Վանի շենքերի նրա նկարագրությունը հնագիտական գյուտերի կապակցությամբ լիովին պահպանում է իր արժանահավատությունը։ Նկարագրելով Շամիրամի շինարարական գործունեությունը Վանում, Խորենացին նշում է. «Շինէ և ընտիր ընտիրս և բազումս ի մէջ քաղաքին ապարանս ի պէս պէս քարանց և ի գունից զարգարեալս, կրկնայարկս և եռայարկս» (գիրք Ա, ԺԶ)։

Աշտարակների հարթ ծածկը, նրա տակի գերանների վերջավորությունները պատկերող ատամնաշարը նույնպես իր հաստատումն է գտնում ուրարտական բազմաթիվ և բազմատեսակ նյութերում։ Կարմիր-բլուրի պեղումները ցույց են տալիս, որ սենյակների ծածկը հարթ էր և կազմված էր հողածածկ գերաններից։ Պեղումների ընթացքում հաճախ հանդիպում են ընկած, վառված գերաններ[40]։

Թոփրախ-կալեում, տաճարի ավերակներից ոչ հեռու, գերմանական արշավախումբը հայտնաբերեց ստորերկրյա մի սենյակ, որտեղ ընդօրինակված էր գերանների օգնությամբ ստեղծված ուրարտական հարթ ծածկը[41]։

Ասորեստանի Սարգոն II թագավորի տեքստերից իմանում ենք, որ Ուլխու քաղաքում Ռուսա I-ի պալատի առաստաղը ծածկված էր նոճենու բուրումնավետ գերաններով, և ասորեստանյան զինվորները, պալատը թալանելիս, չզբաղեցան պոկել այդ գերանները և տանել Ասորեստան[42]։

Վերջապես, Բրիտանական թանգարանում պահվող մեզ հայտնի բրոնզե թերթիկի, ըստ երևույթին նաև Բեռլինի թանգարանում պահվող նույնանման թերթիկի վրա վերարտադրված շենքի ծածկը ևս հարթ տեսք ունի, ընդ որում, ուսումնասիրողների կարծիքով պատկերված են նաև քառանկյունի կտրվածք ունեցող գերանների վերջավորությունները[43]։ Այսպիսի ծածկ նշմարելի է նաև

[38] Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, նկ. 56 և էջ 17։

[39] E. Herzfeld, նշվ. աշխ., էջ 35։

[40] К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини (Кармир-блур, IV), Ереван, 1955, էջ 80, 90։

[41] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 150, 258։

[42] Նույն տեղում, էջ 258։

[43] E. Herzfeld, նշվ. աշխ., էջ 35։ Այդպես են պատկերված այդ վերջավորությունները դծագրերի վրա (օր. Б. Б. Пиотровский, Искусство Урарту, նկ. 56), բայց իրականում նրանք կլոր կտրվածք ունեն (E. Akurgal, Die Kunst Anatoliens von Homer bis Alexander, München, 1962, նկ. 5)։

Բրիտանական թանգարանում նույն թերթիկի հետ պահվող ուրարտական աշտարակի բրոնզե մոդելի վրա, ինչպես նաև Հայաստանի պատմական թանգարանում պահվող ուրարտական աշտարակի ոսկրե մոդելի վրա։ Աշտարակի բրոնզե մոդելի գերանների վերջավորությունները նույնպես պատկերված են կլոր կտրվածքով։

Հատկանշական են այն նմանությունները, որոնք վերաբերում են իրանական աշտարակաձև շենքերի արտաքինի մշակմանը։ Կաաբա-ի-զարդուշտի երկշրջանակ պատուհանները հար ու նման են վերևում հիշատակված շենքերի մոդելների պատուհաններին, ինչպես նաև վերջերս Ադյջևազում հայտնաբերված քարի վրա փորագրված ամրոցի մոդելի պատուհաններին[44]։

Մի առանձնահատկությամբ ևս աշտարակաձև շենքերը հիշեցնում են ուրարտական ճարտարապետության շինարարական սկզբունքները։ Երկու աշտարակներում էլ կառուցողները ձգտել են տարբեր գույնի քարերով ստեղծել գույների հակադրություն։ Եթե պատերը բաց դեղնավուն քարերից են շարված, ապա պատուհանները, որոնք, ի դեպ, խուլ են, շրջանակներով հանդերձ մուգ, սև գույնի քարից են։ Այս սկզբունքը ըստ երևույթին բավական լայն տարածում է գտել աքեմենյան ճարտարապետության մեջ։ Աքեմենյանների հնագույն մայրաքաղաքում՝ Պասարգադայում կարելի է հանդիպել բազմաթիվ շենքերի, որոնք կառուցված են տարբեր գույնի քարերի համադրությամբ[45]։ Բազմադունության ձգտումը ճարտարապետության մեջ հատկապես բնորոշ է ուրարտացիներին։ Շամիրամի վերաբերյալ Խորենացուց վերը բերված հատվածից արդեն կարելի է կռահել այդ մասին։ Այդ տեղեկությունը առարկայական հաստատում գտավ անցյալ դարում, երբ Թուփրախ-կալեում բացվեցին ուրարտական տաճարի մնացորդները։ Նրա պատերը շարված էին շախմատաձև դասավորված տարբեր գույնի՝ բաց և մուգ մոխրագույն, լավ մշակված քարերից[46]։ Եթե սրան ավելացնենք ուրարտական շենքերի նաև ներքին տարածությունների, պատերի և հատկապես հատակների, տարբեր գույնի քարերով հարդարված լինելու փաստը, ապա կհամոզվենք, որ գույնի հարցը ուրարտական ճարտարապետության մեջ ուներ մեծ նշանակություն, որը փոխանցվեց նաև իրանցիներին։

Ուրարտա-իրանական մերձեցման եզրերը կարելի է հայտնաբերել նաև կրոնա-պաշտամունքային թեմաներ արտացոլող կոմպոզիցիաներում և պատկերագրական սխեմաներում։

Անցյալ դարում Թուփրախ-կալեի գինու պահեստի կարասներից մեկում գտնվեց ոսկե մի մեդալիոն՝ գահի վրա նստած կնոջ և նրա դիմացը կանգնած մեկ ուրիշ կնոջ փորագրված պատկերներով (նկ. 4, 5)։ Երկու անձնավորությունները էլ ունեն նախշերով պատած շքեղ զգեստներ։ Նստած կինը ձեռքում բռնել է մի ճյուղ, կանգնածը ձեռքերը պարզել է։ Ըստ ոմանց՝ մեդալիոնի վրա ներկայացված են ուրարտական թագուհին և նրա սպասուհին, սակայն ընդունելի է դարձել այն կարծիքը, ըստ որի՝ նստած կինը պտղաբերության ուրար-

[44] C. A. Burney and G. R. Y. Lawson, Urartian reliefs at Adilcevaz on lake Van, Anatolian Studies, VIII, 1958, տախտակ XXXV, նկ. 3։

[45] E. Schmidt, Նշվ. աշխ., էջ 22, 23։

[46] Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, էջ 96։

տական աստվածուհին է՝ Խալդ աստծո ամուսին Արուրանին, որին երկրպագում է ուրարտական թագուհին[47]։

Երկրպագության կամ զոհաբերության նման սխեման չի սահմանափակվում այս օրինակով։ Մի շարք գյուտեր, հատկապես Կարմիր-բլուրից, էլ ավելի ընդլայնեցին մեր գիտելիքները ուրարտական արվեստում տարածում գտած այս կոմպոզիցիայի և նրա բովանդակության մասին[48]։ Հատկանշական է, որ ուրարտական արվեստի այս թեման, պատկերագրական նույն առանձնահատկություններով, հանդիպում է իրանական՝ աքեմենյան ժամանակաշրջանի կնիքի վրա[49] (նկ. 3, 6)։ Այստեղ ևս ներկայացված է նույն նստած աստվածուհին, դիմացը կանգնած կնոջ պատկերով։ Մի քիչ հեռու կանգնած է մի երրորդ անձնավորություն, որը, ի դեպ, իր գլխանոցի առանձնահատկություններով (նա կրում է աքեմենյան ատամնավոր թագ) հաստատում է կնիքի ճիշտ թվագրումը։

Ուշագրավ և կարևոր է այն հանգամանքը, որ ուրարտա-իրանական աղերսները ընդգրկում են նաև նյութական մշակույթի այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են մետաղագործությունը և խեցագործությունը։ Այս տեսակետից հետաքրքիր են Կարմիր-բլուրի և Արին-բերդի ուրարտական հուշարձանների տվյալները։ Տարիների ընթացքում, հատկապես Կարմիր-բլուրի պեղումների շնորհիվ, կուտակվել է հարուստ նյութ, որի ուսումնասիրությունը կարող է անսպասելի արդյունքներ տալ մեզ հետաքրքրող թեմայի համար ևս։ Կարմիր-բլուրից է գալիս (1951 թ. պեղումներ) բրոնզե խոր մի թաս, ուռուցիկ իրանով և թեք, թեթևակի դեպի դուրս լայնացող պռակով (Հայաստանի պետական պատմական թանգարան, № 2010 115)։ Անոթի ուսերի վրա հորիզոնական, իրար նկատմամբ զուգահեռ կողավոր գոտիներ են դրվագված, որոնք հազիվ են նշմարվում լուսանկարում (տխտ. 1, 1)։ Այս առարկան, որը հին արևելյան ընդգծված կերպար ունի, գուցե չարժանանար մեր ուշադրության, եթե չհաստատվեր նրա ակնառու նմանությունը իրանական նյութի հետ։ Պերսեպոլիսի Դարեհ I և Քսերքսես I թագավորների սյունազարդ ընդունասրահի, ապադանայի մուտքի հանրահայտ բարձրաքանդակների վրա ամենայն մանրամասնությամբ և ճշտությամբ վերարտադրված են բազմաթիվ և բազմատեսակ անոթներ, որոնցից երկուսի նմանությունը ուրարտական վերոհիշյալ անոթի հետ կասկած չի թողնում[50]։ Պատկերված թասերը ունեն նույն ուռուցիկ, կլորացող իրանները և բարձր թեք պսակները (տխտ. 1, 2)։ Մի անոթի իրանը լրիվ հարթ է, երկրորդինը՝ դրվագված կողավոր գոտիներով։ Պսակների հիմքում ուլունքաշար է պատկերված, իսկ ինքը՝ պսակը պատած է ուղղահայաց թերթիկների շարքով։ Նշված զարդերը, որոնք հատուկ են աքեմենյան ժամանակաշրջանին, ամենևին ստվեր չեն գցում Կարմիր-բլուրի և Պերսեպոլիսի այս անոթների

---

[47] Նույն տեղում, նկ. 48։

[48] Նույն տեղում, նկ. 49, 50։

[49] Б. Б. Пиотровский, Урартская бронзовая статуэтка Гос. Музея Армении, „Советская Археология", VI, 1940, էջ 91։ Г. А. Тирацян, Опыт периодизации материальной культуры древней Армении (VI в. до н. э.—III в. н. э.), ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գրա.), 1957, № 2, էջ 80։ И. М. Лосева, Некоторые урартские ювелирные изделия с изображением ритуальных сцен. „Древний Мир". Сборник статьей в честь акад. В. В. Струве, Москва, 1962, էջ 308 և հետ.։

[50] E. Schmidt, Նշվ. աշխ., տախտակ 41 B։

տիպաբանական-ազգակցական կապի վրա, այլ ընդգծում են նրանց ժամանակագրական տարբերություններ։

Ուրարտական մի այլ անոթ՝ բրոնզից, գնդաձև իրանով և բարձր, դեպի գուրս ծռվող պսակով (տխտ. I, 3), նույնպես Կարմիր-բլուրից է (1956, Հայաստանի պետական պատմական թանգարան)։ Մեր կարծիքով այս օրինակի համար ևս կարելի է մատչելի զուգահեռներ գտնել աքեմենյան ժամանակաշրջանից։

Ախալգորիի մ. թ. ա. V դարով թվագրվող գանձի հարուստ նյութերի կազմում կա մի արծաթե անոթ, որը (թեպետ և վնասված է) իր ընդհանուր ձևով հիշեցնում է վերը նկարագրված օրինակը[51] (տխտ. I, 4)։ Երկու անոթները նման են նաև պսակի հիմքում տեղադրված գոտիի առկայությամբ. Կարմիր-բլուրինը՝ պարզ, ռելեֆ, Ախալգորիինը՝ ժամանակի ոգուն համապատասխան, ուլունքաշարից կազմված։ Աքեմենյան շրջանի մյուս անոթը, որը նման է նախորդին, փորագրված է Օքսուսի կամ Ամու-Դարիայի VI—IV դարերով թվագրվող գանձի մետաղյա մի թերթիկի վրա պատկերված պարսիկ ազնվականի ձեռքում[52] (տխտ. I, 5)։

Ուրարտական մետաղագործության բնորոշ և հետաքրքիր մի խումբ պետք է համարել լայն թասերը, այսպես կոչված փիալաները, որոնց թիվը մի քանի անգամ կրկնապատկվել է Կարմիր-բլուրի պեղումների շնորհիվ։ Պետք է նշել նրանց բազմազանությունը ինչպես զարդերի, այնպես էլ պատրաստման եղանակի տեսակետից։ Արին-բերդի պեղումներից հայտնաբերվել են նաև կավից պատրաստված այդպիսի թասերի բեկորներ։

Այս պայմաններում բավականին օրինաչափ է նրանց համեմատումը իրանական նմանօրինակ առարկաների հետ։ Այդ աշխատանքը կատարելիս, սակայն, չի կարելի չխոսել Ասորեստանի շոշափելի ազդեցության մասին իրանական փիալագործության վրա, թեև մի քանի աշխատություններում այս ազդեցության նշանակությունը չափից դուրս գերագնահատվում է[53]։

Հնագիտական պեղումները բացահայտեցին ուրարտական մետաղագործության ծաղկման մի պատկեր, որը լրիվ համընկավ գրավոր աղբյուրների տվյալների հետ։ Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի կողմից Մուսասիրի նվաճման, ավերման և թալանի նկարագրությունից երևում է, թե մետաղագործության ինչ նշանակալից օջախ էր Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան այս անկյունը։ Այդ մասին են վկայում Մուսասիրից Ասորեստան տարված նյութերի և առարկաների վերաբերյալ տվյալները։ Սարգոնը Ասորեստան է տեղափոխել երկու տոննա ոսկի, 10 տոննա արծաթ, 100 տոննա պղինձ, մեծ քանակությամբ երկաթ, ապա բազմաթիվ, ավելի քան հարյուր անուն առարկաներ, որոնք հիշատակվում են տեքստում, ընդամենը 333.500 առարկա։ Հականե հանվանե հիշատակվում են մի քանի տեսակ թասեր, այդ թվում՝ 396 ծանր ու թեթև արծաթե թասեր՝ Ասորեստանի, Ուրարտուի և Խաբխիի արտադրանքը[54]։ Ինչպես արդեն ասացինք, այս պատկերը հաստատվում է հնագիտորեն, Թոփրախ-կալեի և առավելապես Կարմիր-բլուրի նյութերով։ 1949 թ.

---

[51] Я. И. Смирнов, Ахалгорийский клад. Тбилиси, 1934. տախտակ XII, № 66.
[52] O. M. Dalton, Treasure of the Oxus, 2nd ed., 1926, տախտակ XV, № 69
[53] Տե՛ս H. Luschey, Die Phiale, Bleicherode am Harz, 1939.
[54] Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, էջ 36—37։

Կարմիր-բլուրում պեղված կարասային դահլիճում հայտնաբերվեցին IX—VIII դարերի 96 բրոնզե թասեր[55]։

Հին արևելյան թաս-ֆիալները դասակարգված են ամենայն մանրամասնությամբ[56]։ Ուրարտա-իրանական կապերի համար հետաքրքրություն են ներկայացնում մի քանի խմբեր.

Դեմ հանդիման տեղադրված ելուստներով թասեր.—Հայտնի են ուրարտական երկու այդպիսի թաս Կարմիր-բլուրից։ Այս տիպը աքեմենյան ժամանակաշրջանում շատ տարածված մի տեսակ էր։ Քանի որ ասորեստանյան օրինակները ավելի վաղ շրջանի են և առայժմ ավելի բազմաթիվ[57], չի կարելի որևէ վճռական դեր վերագրել ուրարտական նմուշներին՝ իրանական նմանօրինակ թասերի ձևավորման գործում։

Լեզվաձև զարդերով թասեր.—Այս տիպի մի մեծ անոթ, հիերոգլիֆ նշաններով, հայտնի է Խորսաբադ-կալեից. անցյալում այս եզակի օրինակով է վիճարկվել ասսուրական թասերի նշանակությունը տվյալ ձևի մշակման գործում[58]։ Կարմիր-բլուրի պեղումները ուրարտական նման թասերի ընդհանուր թիվը հասցրին 3-ի, չհաշված քարե կլոր տուփը, որի հատակը մշակված է նման երկարավուն լեզվաձև զարդերով. բայց այդ էլ բավարար չէ իրանական նյութը ուրարտականից բխեցնելու համար։

Տերևաձև զարդերով թասեր.—Ի տարբերություն նախորդների, այս խմբի թասերը, որպես կանոն, մշակված են փորագրությամբ (գրավիրովկայով) և թեթևակիորեն դրվագված են։ Ասորեստանում այս տիպի թասեր չեն հանդիպում, մինչդեռ աքեմենյան ժամանակաշրջանում դրանք մեծ տարածում էին գտել։

Կարմիր-բլուրի ֆիալաների շարքում կարելի է առանձնացնել մի նշանակալից խումբ, որի տերևաձև և պսակաձև զարդերը փորագրված են և թեթևակիորեն դրվագված օր. Հայաստանի պետական պատմական թանգարան, № 2010 (166), (տխտ. II, 3)։ Ժամանակակից նմանօրինակ թաս կարելի է հանդիպել Ուրարտուին անմիջականորեն հարևան տերիտորիայում (Զենջիրլի)[59]. թասերի այս խումբը կարող է նշանակալից ազդեցություն ունեցած լինել աքեմենյան ժամանակաշրջանի իրանական մի քանի որոշակի օրինակների վրա։ Այս խմբին հատկապես մոտ է կանգնած թվում Շոշ քաղաքում հայտնաբերված մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսով թվագրվող թասը՝ սրածայր տերևներով կամ պսակաթերթերով[60] (տխտ. II, 4)։

Աքեմենյան Պարսկաստանի մետաղագործությանը հայտնի է արծաթե կամ բրոնզե անոթի մի տիպ, երկարավուն, դեպի վեր լայնացող իրանով, որը ընդգծված ուսեր կազմելու եղանակով շեշտակի անցում է կատարում դեպի չափազանց բարձր, թեթևակիորեն լայնացող պսակը (տխտ. II, 2)։ Այս անոթների բնորոշ կողմը նրանց կենդանակերպ կանթերն են։ Նմանօրինակ երեք անոթներ պատկերված են Պերսեպոլիսի բարձրաքանդակներում՝ սիրիացիների։

---

[55] Б. Б. Пиотровский, Кармир-блур, II, Ереван, 1962, էջ. 54 և հտ.։

[56] H. Luschey, նշվ. աշխ.։

[57] Նույն տեղում, էջ 41 և հտ.։

[58] Նույն տեղում, էջ 81։

[59] Նույն տեղում, նկ. 32։

[60] J. de Morgan, Mémoires de la Delegation en Perse, VIII, 1905, տախտակ III։

արմենների և մարերի ձեռքում[61] և ժամանակագրական հաստատուն կովաններ են տալիս, քանի որ վերոհիշյալ բարձրաքանդակների պատրաստման ժամանակը որոշվում է մ. թ. ա. V դարի առաջին կեսով։ Այդպիսի անոթներ գտնվել են Առաջավոր Ասիայի և Բալկանյան թերակղզու տարբեր վայրերից՝ սիստեմատիկ պեղումների ընթացքում կամ պատահական գյուտերի շնորհիվ[62]։

Աքեմենյան մետաղագործության այս կուռ խմբի ծագումը, անշուշտ, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում։ Որոշ մանրամասնություններով նրանք կապվում են վաղ, Թեփե-Սիալկի ձևերի կամ ասսուրական խեցագործության նմուշների հետ[63]։ Մեզ թվում է, որ այս հարցում ևս չի կարելի անցնել ուրարտական ժառանգության կողքով։

Արին-բերդում գտնվել է բավական մեծ չափերի երկկանթանի կավե մի անոթ, կանթերի վրա դեպի վեր ցցվող փշիկներով (Հայաստանի պետական պատմական թանգարան[64] (տխտ. II, 1)։ Ընդհանուր գծերով անոթը ցածրանիստ է ու լայն, բայց մոտիկից նայելիս տիպական որոշակի կապ կարելի է հաստատել իրանական վերոհիշյալ օրինակների հետ։ Այս անոթը միայնակ չէ։ Արին-բերդում գտնվել են վերոհիշյալ կանթերի բազմաթիվ նմուշներ, մի հանգամանք, որն, իհարկե, խոսում է այդպիսի անոթների լայն տարածման մասին։

Արին-բերդում գտնված անոթի ուրարտական ծագումը բավականին որոշակի է թվում, դատելով կավի բաղադրությունից և փայլեցրած արտաքինից։ Դեռ ավելին՝ անոթի իրանի վրայի եռանկյունիներից կազմված երկու գոտիներն իրենց զուգահեռներն ունեն էրմիտաժում պահվող՝ Թոփրախ-կալեից ակադ. Ն. Մառի և ակադ. Հ. Օրբելու կողմից բերված ուրարտական մի բեկորի նման զարդերում։ Իր ընդհանուր ձևով այն հիշեցնում է Կարմիր-բլուրի միջնաբերդից պեղված կարմիր, փայլեցրած երկկանթանի անոթը (Հայաստանի պատմական թանգարան. ցուցասրահ)։ Ինչ վերաբերում է կանթերի ձևերին, ապա որոշ նմանություն կարելի է գտնել Հյուսիսային Կովկասում, Անդրկովկասում և Ուրարտուում հանդես եկող բրոնզե անոթների կենդանակերպ ոճավորված կանթերի հետ, մանավանդ որ ուրարտական կավանոթների վերոհիշյալ կանթերը նույնպես կենդանակերպ են երևում, բայց ծայրահեղորեն ոճավորված[65]։ Վերջապես, Արին-բերդի տիպի անոթ, ավելի սլացիկ և հետևապես շատ մոտ իրանական օրինակներին, գտնվել է Կարմիր-բլուրի քաղաքային թաղամասում. այն վերաբերում է ուրարտական ժամանակաշրջանին[66]։

Ուրարտա-իրանական կապերի մասին մեր գիտելիքները, անշուշտ, կհարստանան նորանոր տվյալներով. կարևորն այն է, սակայն, որ այդ կապերը ռեալ պատմական հիմքերի վրա են մնում։ Նոր տվյալներ են երևան եկել, որոնք լուսաբանում են իրանական ցեղերի հնագույն պատմությունը ուրարտական պետության անմիջական հարևանության պայմաններում։

---

[61] E. Schmidt, Persepolis. I, 1953, *տախտակ* 27 B., 29 B., 32 B.

[62] P. Amandry, Torreutique achéménide, Die Antike Kunst, № 2, 1959.

[63] *Նույն տեղում, էջ 38—39 և* R. Ghirschman, Fouilles de Sialk, t. II, Paris, 1939, *տախտակ* IV, № 1 *և* 2.

[64] *Մ. Իսրայելյանի տեղամասից։*

[65] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, *էջ 321—323, նկ. 103—107։*

[66] *Հ. Մարտիրոսյանի պեղումներից։*

Մի քանի տարի առաջ ուսումնասիրողների շրջաններում տիրում էր այն կարծիքը, թե Իրանի հյուսիս-արևմտյան մասում իրանական ցեղերը հանդես են եկել բավականին ուշ, մ. թ. ա. VIII դարից սկսած, այն էլ սկզբում միայն Մարաստանի արևելյան շրջաններում[67]։ Սակայն սեպագիր նյութերից քաղված անձնանունների և, որը հատկապես կարևոր է, տեղանունների վերլուծությունը ցույց տվեց, որ IX դարի առաջին կեսից սկսած այդ ցեղերը վկայակոչվում են Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան մասերում, ավելի կոնկրետ՝ Ուրմիո լճի շրջակայքում, ներառյալ հյուսիսային և արևմտյան շրջանները, իսկ երբեմն նույնիսկ Հայկական լեռնաշխարհի որոշ հատվածներում[68]։ Այստեղից է, որ իրանական ցեղերից մարականները շարժվեցին դեպի արևելք, դեպի բուն Մարաստան, իսկ պարսկականները՝ դեպի հարավ, Ֆարս կամ Պարսք նահանգը։ Այս հանգամանքը զգալի չափով փոխում է մեր պատկերացումները ուրարտա-իրանական շփման կետերի ժամանակագրական և տերիտորիալ հատկանիշների վերաբերյալ, որոնք փոխադարձաբար հաստատվում են նյութական մշակույթի մասին վերևում հիշատակված դիտողություններով։

УРАРТСКАЯ ЦИВИЛИЗАЦИЯ И АХЕМЕНИДСКИЙ ИРАН

Г. А. ТИРАЦЯН

(Резюме)

Культурно-исторические связи государства Урарту с Ахеменидским Ираном уже давно привлекают внимание исследователей древнего Востока. За прошедшее время был сделан ряд важных и интересных наблюдений, способствующих выявлению роли Урарту в формировании древнеиранской культуры ахеменидского времени (Э. Херцфелд, Р. Гиршман, Р. Барнетт, Б. Пиотровский, К. Оганесян и др.).

Археологические раскопки урартских центров на территории Советской Армении, в частности Кармир-блура и Арин-берда, значительно расширяют возможности для всестороннего изучения данного вопроса. Точки соприкосновения урартской архитектуры с ахеменидской устанавливаются довольно наглядно в наскальных сооружениях, искусственных террасах, платформах и в строительной технике. Раскопки последних лет в городской части Кармир-блура, а также в Алтын-тепе (около Ерзнкяна) подтвердили высказанное ранее исследователями предположение о возможном влиянии урартской архитектуры на становление колонных залов Ахеменидского Ирана. Дальнейшее изучение урартских памятников выявило неожиданные возможности для более обоснованного объяснения происхождения башнеобразных сооружений (Накш-и-

[67] Г. М. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, էջ 140—145, 398։ И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 130—131, 198 և այլն։

[68] Э. А. Грантовский, Иранские имена из приурмийского района в IX—VIII вв. до н. э. „Древний мир". Сборник статей в честь акад. В. В. Струве. М., 1962, էջ 250—265։

Рустем, Пасаргады, возможно — Нурабад), занимающих довольно обособленное место в древнеиранской архитектуре. Урартская архитектура знакома с целым рядом башнеобразных сооружений разного назначения, культовыми (Алтын-тепе), возможно жилыми (бронзовая модель из Топрах-кале и костяная модель из Кармир-блура), строительными (Кармир-блур), не считая башен, входящих в систему оборонительных стен.

Характерные параллели между урартскими памятниками и упомянутыми иранскими сооружениями имеют весьма широкий охват, как-то: план с угловыми выступами, многоэтажность, обработка окон, разноцветность примененного в кладке камня и т. д.

Несомненно, весьма важно то обстоятельство, что урартско-иранские связи не исчерпываются архитектурой; они затрагивают иконографические вопросы и охватывают такие характерные отрасли материальной культуры двух стран, какими являются керамика и торевтика. Раскопки Кармир-блура познакомили нас с ранее неизвестными страницами урартской торевтики. Особое место занимает разнообразная бронзовая посуда, среди которой имеются образцы, явно перекликающиеся с соответствующими иранскими предметами. Глубокая чаша с косым венчиком выявляет большое сходство с некоторыми сосудами на персепольских рельефах. Сосуд с выпуклым, почти шаровидным туловом и высоким расширяющимся венчиком имеет свои параллели среди посуды Ахалгорийского клада, а также на пластинке из Амударьинского клада.

Богатая коллекция урартских чаш-фиал из Кармир-блура также дает возможность установить некоторую связь с ахеменидским соответствующим материалом. Это касается кармир-блурских фиал с выгравированным в основном орнаментом из остроконечных лепестков, напоминающим орнамент чаши IV в. до н. э. из Суз.

Важное место в иранской художественной торевтике занимают вазообразные вытянутые сосуды с зооморфными ручками. Они представлены также на персепольских рельефах. Происхождение этих сосудов не совсем ясно. Отдельными чертами они несомненно перекликаются с ассирийским или же иранским доахеменидским материалом, но раскопки на Арин-берде и Кармир-блуре указывают и на урартскую керамику, как на один из возможных истоков возникновения данного типа.

Данные материальной культуры наряду с лингвистическими показывают, насколько реальны исторические связи Урарту и Ирана.